



Հաստատում եմ՝

«Մատենադարան» Մերոպ Սաշտոցի անվան
հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի
տնօրեն Արայիկ Խզմայան

Կարծիք

Արեգ Վարդանյանի ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (XI ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ - XIII ԴԱՐ) թեմայով Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Արեգ Արմանի Վարդանյանի ատենախոսությունը նվիրված է XI դարի երկրորդ կեսից մինչև XIII դարի հայ քաղաքական մտածողության առանձնահատկություններին: Տարաբնույթ աղբյուրների և ուսումնասիրությունների համադրությամբ ատենախոսը քննել է Բագրատունյաց թագավորության անկման պատճառները և իմաստավորումը միջնադարյան հայ մատենագրության մեջ, Կիլիկիայի Հայկական թագավորության և Ջաքարյան իշխանապետության ստեղծման գաղափարական ակունքները և հասարակական-քաղաքական նախապայմանները: Աշխատանքում առանձնակի վերլուծության է արժանացել «հայ ազատագրական լեզենդ» պատմագիտական հասկացությունը՝ առանցքում ունենալով հայ միջնադարյան ողբերը, տեսիլները և «թագավորության վերականգնման գաղափարը»: Ներկայացրել է քաղաքական իշխանության ընկալումը միջնադարյան Հայաստանում, մասնավորապես իշխանական տների ծագումնաբանական առասպելները: Անդրադարձել է մարդկանց նախնական ազատության գաղափարին:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Ներածության մեջ ներկայացված են ատենախոսության թեմայի արդիականությունը, ուսումնասիրության նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, մեթոդաբանությունը և աղբյուրագիտական հիմքերը:

Ատենախոսության առաջին գլխի խորագիրն է «Քաղաքական գաղափարների զարգացման պատմահասարակական միջավայրը և մատենագրական դրսևորումները». այն կազմված է երեք ենթագլխից: Առաջին ենթագլխում վերլուծության է ենթարկվում հայոց թագավորական և իշխանական տների անկումը, Բագրատունյաց Հայաստանի անկման իմաստավորման հարցը: Երկրորդ ենթագլխում ... ուսումնասիրվում է... XI... դարի... ճգնաժամին... հայ... վերնախավի արձագանքելու պայմանատեսակները, առանձնակի ուշադրություն է դարձվում նաև Կիլիկյան Հայաստանի ստեղծման պատճառներին: Երրորդ ենթագլխում ատենախոսը վերլուծում է միջնադարյան հայ քաղաքական մտածողությունն ուղենշող «ողբատեսիլային մտածողությունն» և «թագավորության վերականգնման գաղափարը»: Ցույց է տրվում, որ այս գաղափարը առանցքային է եղել հայ մատենագրության մեջ և կարևոր դեր է ունեցել պետականության անկումներից հետո դրա վերականգնման գործում:

Ատենախոսության երկրորդ գլուխը խորագրված է «XI-XIII դարերի առանցքային քաղաքական գաղափարների քննություն» և բաղկացած է երեք ենթագլխից: Առաջինում վերլուծվում են հայ ավատական տների ծագումնաբանական առասպելները, ներկայացվում Բագրատունիների, Արծրունիների, Մամիկոնյանների, Ռուբինյանների, Պահլավունիների և այլ տների ծագումնաբանությանն առնչվող տեղեկությունները: Երկրորդ ենթագլխում քննվում են իշխանավորի կատարելատիպին առնչվող հարցեր, վիմագրերի, հիշատակարանների և մատենագրական այլ աղբյուրների քննությամբ ներկայացվում ժամանակն արտահայտող կաղապարային օրինակներ («ի թագաւորութեան», «յաշխարհակալութեան» և այլն): Երրորդ ենթագլխում փորձ է արվել ներկայացնել մարդկանց նախնական ազատության գաղափարի արտացոլումը որոշ հայ մատենագիրների երկերում, գաղափարի ակունքները և առանձնահատկությունները:

Ատենախոսության թեման հիրավի արդիական է: Աշխատանքն անկասկած գիտական նորույթ և հետաքրքրական վարկածներ է պարունակում, որոնք երբեմն ներկայացված են համարձակ առարկություն չենթադրող ձևով, մինչդեռ գովելի է, երբ եզրակացությունները շարադրվում են որպես գիտական տեսակետ՝ պարունակելով առաջարկ և հարցադրում:

Աշխատանքի ամենամեծ առավելություններից մեկն այն է, որ ատենախոսն ուսումնասիրել և գործածել է տարաբնույթ աղբյուրներ, ոչ միայն պատմագրական, այլև վարքեր, տեսիլներ, խրատներ, մեկնություններ և այլն: Կարևոր է ընդգծել հատկապես անտիպ սկզբնաղբյուրների և ձեռագրական նյութի գործածումը: Տպավորիչ է նաև ատենախոսի օգտագործած տարալեզու աղբյուրների և գրականության ցանկը (հին հունարեն, վրացերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն):

Բնականաբար, ինչպես ցանկացած աշխատանք, սույն ատենախոսությունը նույնպես զերծ չէ թերություններից: Ներկայացնենք մեր դիտարկումները և առաջարկները.

1. Աղբյուրների տեսությունը (որը գրավում է սեղմագրի մեծ մասը) ավելի նկարագրողական բնույթ ունի, քան վերլուծական, ըստ որում վերլուծության պարագայում հաճախ քննարկվում է ոչ թե բուն հետազոտությունը, այլ այն կատարած հեղինակը և նրա ունակությունները: Աշխատանքում ընդարձակ մի մաս է նվիրված նախարարական տների «օտար ծագման առասպելներին» (էջ 103-139): Այո, ընդունված և փաստագրված երևույթ է, որ իշխանական տները թագավորության կարգավիճակի հասնելու հիմքեր են փնտրել: Այդուհանդերձ, դա կապ չունի օտարի կամ օտարամոլության հետ. նման տպավորություն է ստեղծվում այդ բառի չափազանց հաճախակի օգտագործմամբ: Շեշտը պետք է դնել ոչ թե «օտար»-ի, այլ թագավորական ծագման վրա, որը և օրինակարգության հիմք է դիտվել միջնադարում: Քրիստոնյա աշխարհում, որպես օրինակարգության ցուցիչ, ամենանախապատվելին, բնականաբար, աստվածաշնչային հիմքն էր. իշխանական տները ոչ թե փորձում էին շեշտել իրենց և՛ օտար, և՛ փառապանծ ծագումնաբանությունը, այլ աստվածաշնչյան ծագումնաբանությունը (հմմտ. Աբրահամին ուղղված «Թագաւորք ազգաց ի քէն ելցեն» Ծննդ. ԺԷ 6):

Ընդունելի չեն պատմական իրողություններին տրված ծայրահեղ և կասկածելի որակումները, ինչպես՝ Բագրատունյաց պետությունն անվանել նսեմացնող «մեռելածին մի միավոր» բնորոշմամբ (էջ 26), ինչն արժեզրկում է այդ թագավորության գոյությունը և դերակատարությունը հայոց պատմության մեջ: Գիտական հետազոտություններում ընդունված է զերծ մնալ պատմական իրադարձությունների և անձանց ինչպես գերագնահատող, այնպես էլ նսեմացնող որակումներից:

2. Առկա են սխալ մեկնաբանված տեղիներ և արտահայտություններ, որոնք ունեն վերանայման կարիք: Օրինակ՝ Հովհաննես Մարկավագի «Յաղագս քահանայութեան...» երկը վերաբերում է ոչ թե քահանաներին կամ երեցներին, ինչպես մեկնաբանում է հեղինակը (էջ 59 «...կարևոր է այն հանգամանքը, որ առաջնորդի դերը տրվում է քահանային, որը հոգևոր իշխանության տեսանկյունից իր աստիճանով զիջում է եպիսկոպոսին և վարդապետին»), այլ քահանայությանն (հոգևորականությանը) առհասարակ: Նկատենք նաև, որ երկը կոչվում է «Յովհաննու Մարկավագ վարդապետի Յաղագս քահանայութեան եւ քահանայից եւ զլիցն նոցին» (Վենետիկ, 1853): Էջ 148, ծնթ. 668 Վարդան Այգեկցու «Խրատ»-ի մեկնաբանությունը չի համապատասխանում մեջբերմանը, այսինքն հղման մեջ առկա հատվածը գուսանական երաժշտության մասին չէ:

3. Եւս մեկ անգամ նշենք, որ ատենախոսության առանձնահատկություններից և առավելություններից է աստվածաբանական հարցերի արծարծումը և երկերի կիրառումը, սակայն որոշ դեպքերում, այս փաստն ավելի խոցելի է դարձրել աշխատանքը: Խոսքն առավելապես վերաբերում է «Մարդկանց նախնական ազատության գաղափարը» ենթագլխին: Մարդու ազատության հարցը, թե՛ աստվածաբանական, թե՛ փիլիսոփայական, թե՛ հասարակական տեսանկյունից շատ ավելի խորը և բազմաշերտ է, քան ներկայացված է ատենախոսության մեջ: Իհարկե, ատենախոսն իրավունք ունի առաջադրելու իր տեսակետը (առանձին հատվածների մանրամասն քննարկումն այստեղ շատ երկար կլիներ): Մեր առարկությունը վերաբերում է առավելապես այն մոտեցմանը և մեթոդին, որով կառուցված է այս ենթագլուխը, ինչն էլ, կարծում ենք՝ հիմք է հանդիսացել հաճախ ոչ ճիշտ մեկնաբանության և եզրահանգման: Մասնավորապես՝ քննարկվող

Ժամանակաշրջանի մատենագիրներից ատենախոսն ընտրել է մի քանիսին, ավելին, այդ մի քանի մատենագիրների պարագայում էլ վկայակոչվում են միայն առանձին երկեր: Օրինակ՝ ատենախոսը գրում է «Ներսես Շնորհալու ժառանգության մեջ կա շատ հետաքրքրական մի տեղեկություն այս մտքի շուրջ» (էջ 166), այնուհետև Ներսես Շնորհալու պատկառելի ժառանգությունից վկայակոչում ընդամենը մեկ նախադասություն «Թուղթ Ընդհանրական»-ից, և միայն դրա հիման վրա եզրակացնում, որ «... եթե Գոշը և Սարգիս Շնորհալին եղել են այս գաղափարի (իմա՝ նախնական ազատության) ջատագովները, ապա Ներսես Շնորհալին եղել է դրա հակառակորդը» (էջ 166), և որ Շնորհալին «դիմակայում էր մարդկանց նախնական ազատության գաղափարին» (էջ 170): Ներսես Շնորհալու (կամ որևէ այլ հեղինակի)՝ ազատության ուսմունքը (կամ որևէ այլ տեսական հարց) քննարկելու և ներկայացնելու համար անհրաժեշտ է դիտարկել և վերլուծել հեղինակի ողջ մատենագրական ժառանգությունը, այլ ոչ թե եզակի վկայակոչում(ներ): Հումանիտար գիտությունները ևս ճշգրիտ են և ամեն տեսակետ անհրաժեշտ է հիմնավորել հստակ փաստարկներով և սկզբնաղբյուրների համակողմանի քննությամբ: Ընդ որում, կարևոր է նաև որևէ հեղինակի այս կամ այն միտքը քննելիս հաշվի առնել, թե ինչ բնույթի երկ է (մեկնություն, թուղթ, խրատ), ինչ միջավայրում և համատեքստում է գրվել և ով է հասցեատերը: Առհասարակ շահեկան կլիներ «Մարդկանց նախնական ազատության գաղափարը» ենթագլուխը չներառել ատենախոսության մեջ. սա կարող էր դառնալ ուսումնասիրման առանձին թեմա: Ատենախոսն ինքն իրավացիորեն նշում է, որ հարցն ավելի մանրագնին լուսաբանման կարիք ունի (էջ 170):

4. Երբեմն քննվող հեղինակների երկերի հղումները և իր տեսակետը հիմնավորող տեղիների մեջբերումները խիստ անհամաչափ են, օրինակ՝ Վարդան Այգեկցու տեսությունը ներկայացնելիս նրա անտիպ «Հարցմունք»-ից ատենախոսը վկայակոչում է ընդարձակ հատված (էջ 166-167), իսկ հետո Վարդան Արևելցու մասին գրում է. «Ասվածը ուշագրավ է այն առումով, որ ժամանակի մեկ այլ նշանավոր վարդապետ՝ Վարդան Արևելցին, առավելապես հակված է այս հատվածը մեկնաբանել հռետորական իմաստով՝ իր ոճով նմանվելով Կապադովկյան հայրերին» և հղում Մատենադարանի 1267 և 1135 ձեռագրերին ու Փայլակ Անթաբյանի մենագրությանը (էջ 167): Նախ, անհասկանալի է, թե ի՞նչ է նշանակում ոճով

կապադովկյան հայրերին նմանվելը, որովհետև կապադովկյան հայրեր Գրիգոր Նյուսացին, Բարսեղ Կեսարացին և Գրիգոր Նազիանզացին արդեն միմյանցից տարբերվող ոճ և մոտեցում ունեն տարբեր հարցերի առնչությամբ: Հատկապես առանցքային դրույթների վերաբերյալ այսօրինակ ընդհանրացումներ և հիմնարար եզրահագնումներ անելիս հարկ է մեջբերել և պարզաբանել համապատասխան հատվածները (թեկուզև մեկ-երկու նախադասությամբ), և հետո միայն հղել այս կամ այն աղբյուրին կամ հեղինակին: Այսպիսի օրինակներ կան նաև ատենախոսության այլ հատվածներում, երբ առանց որևէ մեջբերման կամ վերլուծության ատենախոսը ներկայացնում է իր եզրահանգումը և հղում աղբյուրին, ինչպես՝ «Վարդան Այգեկցու այս սպասմանը համահունչ է գրված Գրիգոր գրչի 1204թ. հայտնի հիշատակարանը» (էջ 89), «Նույն ոգով է գրված Վարդան Արևելցու «Ժղլանք»-ը (էջ 148):

5. Իսկապես գնահատելի է ձեռագրական նյութի և անտիպ բնագրերի գործածումն աշխատանքում, սակայն պետք է նկատի ունենալ որոշ առանձնահատկություններ: Ձեռագրերին հղելիս պետք է մասնավորեցնել, թե տվյալ ձեռագրից կոնկրետ ինչ բնագիր է գործածվել, ներկայացնել խորագիրը, մինչդեռ երբեմն ուսումնասիրությունների և աղբյուրների շարքում պարզապես նշվում է ձեռագրի համարը, առանց որևէ հստակեցման (օրինակ՝ էջ 104, տողատակ 469 «ՄՄ 1504, թ. 541...», էջ 148 «ՄՄ 9266» (այստեղ բացակայում է նույնիսկ թերթահամարը), էջ 87 «Վարդան Այգեկցու մի գրվածքում»): Ավելին, ձեռագրերի պարագայում ցանկալի է նշել, թե ե՞րբ և որտե՞ղ է գրվել տվյալ ձեռագիրը:

6. Որոշ դեպքերում առկա է մատենագրական սկզբնաղբյուրների ոչ ճիշտ բնորոշում: Օրինակ՝ «Կեչառեցու՝ Ալեքսանդրին նվիրված երկ» (էջ 138). Խաչատուր Կեչառեցին Ալեքսանդրին նվիրված երկ չի գրել, այլ՝ Կեղծ Կալիսթենեսին վերագրված Մակեդոնացու պատմության հայերեն թարգմանության առաջաբան, վերջաբան և կաՖաներ: «Հեթում արքայորդու ճաշոցի հեղինակը» (էջ 144). խոսքը պայմանական անվամբ «Հեթումի ճաշոց» կոչված ձեռագրի (ՄՄ 979) հիշատակարանի հեղինակի մասին է:

7. Առկա են որոշ եզրերի և արտահայտությունների ոչ ճիշտ ձևակերպումներ, օրինակ՝ «Հայ վարդապետները լինելով Հին Իսրայելի մարգարեների և Կապադովկյան հայրերի մտավոր ժառանգները, փոխառել են նրանց հատուկ

արժեհամակարգը և անգամ բառապաշարը» (էջ 147): «Հին Իսրայելի մարգարեներ»-ի փոխարեն պետք է գրել «հինկտակարանյան մարգարեներ»: Ինչ վերաբերում է Կապադովկյան հայրերին, հայտնի է, որ նրանք երեքն են՝ Գրիգոր Նյուսացի, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նազիանզացի, մինչդեռ Հայ եկեղեցու մատենագիրների վրա ոչ պակաս մեծ է նաև «ոչ կապադովյան» բազում հայրերի ազդեցությունը՝ Հովհան Ոսկեբերան, Եփրեմ Ասորի, Աթանաս Ալեքսանդրացի, Կղեմես Ալեքսանդրացի, Կյուրեղ Ալեքսանդրացի և այլք, ինչպես նաև կրոնա-փիլիսոփայական հեղինակ Փիլոն Ալեքսանդրացին, որը, շնորհիվ իր մեկնաբանական մեթոդի և *Λογισμ* ուսմունքի, մեծ ազդեցություն է ունեցել հետագա և ոչ միայն հայկական աստվածաբանության վրա:

Մեկ այլ դեպքում՝ շարադրանքում խոսվում է վկայաբանությունների մասին, մինչդեռ մեջբերված են վարքեր (էջ 78):

8. Երբեմն թեմայի հետ ուղիղ կապ չունեցող հարցերին տրվում է ընդարձակ ծանոթագրություն, օրինակ՝ Սիրաքի իմաստությունից մի մեջբերմանը կից ատենախոսը քննում է այդ գրքի հետ կապված բավականին հայտնի բնագրագիտական հարցեր (էջ 163), մինչդեռ բուն թեմային վերաբերող որոշ տեղիներ չունեն և ոչ մի բացատրություն (օրինակ՝ էջ 144՝ «Թովմա Արծրունին, խոսելով Հայոց իշխանների գերությունից վերադարձի մասին...», էջ 33՝ «գույգ Գագիկ արքաների մահվանից հետո», էջ 102՝ «Ջալալ ադ-Դինի արշավանքների նախաշեմին...» և այլն): Թեև դրանք հայտնի փաստեր և անձինք են, սակայն գիտական աշխատանքում անհրաժեշտ է ծանոթագրել, նշել տարեթվերը և այլն:

9. Ատենախոսը որոշ դեպքերում կիրառում է զգացական արտահայտություններ, տալիս անձնական որակումներ, ինչը կարծում ենք, այնքան էլ հարիր չէ գիտական էթիկային, ճիշտ հակառակը, ստվերում է փաստարկներով հիմնավորված մոտեցումները (օրինակ՝ Յոստ Գիպերտի, Ժան-Պիեր Մահեի և այլոց հեղինակած հատորի («The Caucasian Albanian Palimpsests of Mount Sinai, vol. I, ed. J. Gippert, W. Schultze, Z. Aleksidze, J.-P. Mahé, Turhout, Brepols, 2008) պատմական մասում տեղ գտած մի տեսակետի՝ «քստմունքի» որակումը (էջ 29), «Ցավով պետք է նշենք, որ որոշ հայագետներ...» (էջ 107) և այլն):

Ատենախոսության մեջ առկա են ոճական առումով ոչ գիտական ձևակերպումներ, ինչպես օրինակ՝ «ազատագրական լեգենդն արդեն խորագույն արմատներ է գցել հայության ուղեղներում» (էջ 87), «Սարկավագի մտքում տեղ գտած հասարակական-քաղաքական գաղափարներն ուսումնասիրել է» (էջ 59), «Դաշանց թուղթ»-ի գծի հետևորդները» (էջ 87), «ազատագրական լեգենդի ելևէջների» (էջ 90), «ի՞նչն է դրդել հայ իշխանական տների ներկայացուցիչներին մոզոնելու օտար ծագում» (էջ 105), «այդ գրվածքներում դողանջում են Թոռնիկյան-Պահլավունի ինամիական կապով ամրացած քաղաքական ճամբարի իդձերը» (էջ 123) և այլն:

10. Ատենախոսությունն ունի կոռ շարադրանք և ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ: Այդուհանդերձ, արծարծվող հարցերի բազմազանության արդյունքում երբեմն խախտվում է ընդհանուր շարադրանքի սահունությունը և տրամաբանությունը, ատենախոսը հաճախ շեղվում է բուն թեմայից: Այս առթիվ առաջարկում ենք հրատարակելու դեպքում ավելացնել փոքր ենթավերնագրեր, ինչը կօգնի առավել համակարգված ներկայացնել աշխատանքը:

11. Աշխատանքում տեղ են գտել նաև ուղղագրական և կետադրական սխալներ, տառաբացթողումներ, վրիպակներ, հրատարակչությունների սխալներ, հղման ոչ միօրինակություն: Մասնավորապես՝ բնագրային մեջբերումներում կան ուղղագրական շեղումներ կամ սխալներ (օրինակ՝ հղում 672 – «ի մեջ ...մատովակեցին...» և այլն): Իհարկե, չենք բացառում, որ այդ սխալագրությունը կարող է լինել գրչական, սակայն այս դեպքում պետք է նշվի (շեղատառ կամ «այսպես յօրինակին»), այլապես ստեղծվում է բնագրի սխալ վերծանման տպավորություն: «Մատենագիրք Հայոց» բազմահատորյակին հղելիս արժե ուշադրություն դարձնել, թե արդյոք դրանք նախորդ հրատարակությունների լոկ վերահրատարակություններն են, թե՞ նոր հրատարակություններ են, և ըստ այդմ նշել կազմողի, խմբագրի, հրատարակչի անունը: Թեև ատենախոսությունների ձևավորման սկզբունքներում այս կետը հստակ չէ, այդուհանդերձ, ավելորդ ենք համարում տողատակերում (նաև սեղմագրի) հրատարակչությունների նշելը՝ ծանրաբեռնելով առանց այդ էլ խիտ հղումները:

Այսպիսով, Արեգ Վարդանյանի ատենախոսությունը հետաքրքրական, բազմաբնույթ հարցերով հագեցած և հիմնականում համակողմանի վերլուծված

կարևոր գիտական աշխատանք է: Ատենախոսության մեջ գնահատելի է ոչ միայն տարաբնույթ, այլև բազմալեզու աղբյուրների և ուսումնասիրությունների ներառումը: Թեմայի խորագիրը, ժամանակաշրջանը և արծարծվող հարցերի շրջանակը շատ լայն է, և, բնականաբար, կան դրվագներ, որոնք ավելի խորը ուսումնասիրման և հիմնավորման կարիք ունեն: Ատենախոսության մեջ ներկայացված որոշ տեսակետներ շատ համարձակ են, որոնց հետ կարելի է համաձայնել կամ՝ ոչ, սակայն դրանց առաջքաշումն արդեն իսկ վկայում է ատենախոսի քննադատական և վերլուծական մտածողության մասին, ինչը հույժ կարևոր է գիտական հետազոտության համար:

Ներկայացված նկատառումներով ու առաջարկներով ամեննին նպատակ չունենք թերագնահատելու կատարված մեծածավալ աշխատանքը, այլ ատենախոսի ուշադրությունը հրավիրելու աստվածաբանական և ձեռագրագիտական որոշ դրույթների, բովանդակային և ոճական հարցերի ուղղությամբ: Արված դիտարկումներն ամեննին չեն նսեմացնում քննարկվող աշխատանքը, ընդհակառակը, լիահույս ենք, որ դրանք կարող են ատենախոսին դույզն-ինչ օգտակար լինել հետագա գիտական գործունեության ընթացքում:

Սեդմագիրն արտահայտում է ատենախոսության բովանդակությունը:

Արեգ Արմանի Վարդանյանի ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (XI ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ - XIII ԴԱՐ) թեմայով Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է թեկնածուական աստիճանի հայցման համար ներկայացվող աշխատությունների պահանջներին, իսկ հեղինակն, անտարակույս, արժանի է պատմական գիտությունների թեկնածուի աստիճանին:


Կարծիքը հաստատվել է Մաշտոցի անվ. Մատենադարանի 5-14-րդ դարերի հայերեն բնագրերի ուսումնասիրման բաժնի 15.06.2025 նիստում (արձանագրություն թիվ 5):

Քննարկմանը մասնակցել են՝

Պ.գ.դ., պրոֆ. Էռնա Մանեա Շիրինյանը, պ.գ.թ. Աշոտ Սարգսյանը, պ.գ.թ. Գառնիկ Հարությունյանը, պ.գ.թ. Էլյա Սարիբեկյանը, պ.գ.թ. Նարինե Վարդանյանը, պ.գ.թ.

Արմինե Մելքոնյանը, աստ.թ. Անահիտ Ավագյանը (հեռավար), պ.գ.թ. Մարի Մամյանը (հեռավար):

«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի «5-14-րդ դարերի հայերեն բնագրերի ուսումնասիրման» բաժնի վարիչ՝

պ. գ. դ., պրոֆ. Էռնա Մանեա Շիրինյան 

պ. գ. դ., պրոֆ. Է. Ս. Շիրինյանի ստորագրությունը հաստատում եմ

«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի գիտական գծով տնօրենի տեղակալ, Վահե Թորոսյան, պ.գ.թ. 

17.06.2025